առևտրականի հարկ, տարեկան վեց ակչե չափով։ Ըստ Էրզրումի կանունի՝ դավթարում արձանագրված ու առևտրով զբաղվող մուսուլման ռայաթներից «ռեսմ-ի մյուջերբեռ» չի գանձվել[1]։

Հպատակ ժողովրդի կողոպտման մի միջոց էր նաև «Իմդադ-ի սեֆերիեն» („Imdâd-i seferiye") արշավանքի համար հարկ։ Հարկի այս ձևը հիշատակված է Թուրքիայի եվրոպական մասի կանուն-նամեներում ու չի հիշատակված հայկական նահանգներին վերաբերող կանուն-նամեներում։ Սակայն դա չի կարող հիմք ծառայել ասելու, որ այդ հարկը չի գանձվել հայկական նահանգներում։ Հայկական ժամանակագրություններում մի շարք անգամ հիշատակվում են «Իմդադի սեֆերիե»-ի գանձումները։ Հարկն, իհարկե, որոշակի չափ չի ունեցել և կախված է եղել պետական պաշտոնակատարների կամայականություններից։

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐԸ

Հայկական նահանգների կանուն-նամեներում հիշատակված հարկերի մեջ զգալի տեղ են գրավում անասնապահության համար գանձված հարկերը։ Հիմնական հարկը «ռեսմ-ի աղնեմ»ն է („Resm-i agnem"), ոչխարի համար գանձվող հարկը։ Այդ հարկը հիշատակվում է նաև հետևյալ անուններով. 'ադեթ-ի աղնեմ» ('Adet-i agnem") «կոյուն ռեսմի» („Koyun resmi").

Կանուն-նամեներում հիշատակված են այդ հարկի հետևյալ տարբերակները՝ «ռեսմ-ի յայլակ» („Resm-i yaylak")՝ ամառանոցը բարձրանալիս ոչխարների համար գանձված հարկը, «ռեսմ-ի կշլակ» („resm-i kışlak") կամ «ռեսմ-ի յաթակ» („resm-i yatak")՝ ձմեռելիս ոչխարների համար գանձված հարկը։ Վերջինը կոչվում է նաև «չոբան բեգի» („Çoban begi"), «ռեսմ-ի գյուդե» („Resm-i güde) կամ «քյուփրու հակկը» („köprü hakkı")՝ կամուրջներից ոչխարների հոտը անցնելու ժամանակ վերցված հարկը։

«Ռեսմ-ի աղնեմ»ը կամ աղեթ-ի աղնեմ»-ը Էրզրումի, Գյուրջիստանի և այլ կանուն-նամեների համաձայն երկու ոչխարի համար տարեկան մեկ ակչե է կազմել։ Ոչխարի ու գառան միջև տարբերություն չի դրվել[2]։

ՄԵՂՎԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ՀԱՐԿԵՐԸ

Հիմնական հարկը կոչվել է «ռեսմ-ի կովան» (Resm-i kovan)՝ փեթակի հարկ, կոչվել է նաև «ռեսմ-ի կուվվերե» („Resm-i küvvare")՝ ունի նույն իմաստը։ Արևմտյան Հայաստանում մեղվաբուծության զարգացած աստիճանը նկատի ունենալով պետք է ենթադրել, որ այս հարկը հայ գյուղացուց գանձվող ամենատարածված հարկերից էր[3]։

ԱՅԼ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՐԿԵՐ

«Ռեսմ-ի 'արուս» („Resm-i 'arus", արաբերեն)՝ ամուսնական հարկ։ Այս հարկը գանձվում էր ինչպես ոչ մուսուլման, այնպես էլ մուսուլման ռայա-

---

[1] Erzrum kanunu, s. 63.

[2] Erzrum kanunu, s. 68. Iç Il kanunu, s. 50, Gürcistan kanunnâmesi s. 198, Arabgir kanunu s. 172.

[3] Gürcistan kanunnâmesi, s 198, Malatya livasi kanunu, s. 112, Ersrum kanunu, s. 69.